4741	-Բնական աղետներից առաջացած վնասվածքների կամ վնասների վերականգնում	484 1	0,0		X
4742	-Այլ բնական պատճառներով ստացած վնասվածքների վերականգնում	484 2	0,0		X
4750	ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ԿԱՄ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ, որից (տող4751)	x	0,0	0,0	X
4751	-Կառավարման մարմինների գործունեության հետևանքով առաջացած վնասվածքների կամ վնասների վերականգնում	485 1	0,0		X
4760	ԱՅԼ ԾԱՆՍԵՐ, որից` (տող4761)	x	0,0	0,0	X
4761	-Այլ ծախսեր	486 1	0,0		X
4770	ՊԱՀՈՒՏԱՑԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ, որից` (տող4771)	x	454,0	454,0	0,0
4771	-Պահուստային միջոցներ, այդ թվում`	489 1	454,0	454,0	0,0
4772	համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներ	x	0,0		

5000	Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ, այդ թվում՝ (տող5100+տող5200+տող5300+տող5400)	x		X	5397,0
5100	1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ, այդ թվում՝ (տող5110+տող5120+տող5130)	x	5397,0	X	5397,0
5110	Շենքեր եւ շինություններ, որից՝ (տող5111+տող5112+տող5113)	x	3000,0		3000,0
5111	- Շենքերի և շինությունների ձեռք բերում	511 1	0,0	X	
5112	- Շենքերի և շինությունների կառուցում	511 2	0,0	X	
5113	- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	511 3	3000,0	X	3000,0
5120	Մեքենաներ եւ սարքավորումներ, որից՝ (տող5121+ տող5122+տող5123)	x	0,0		0,0
5121	- Տրանսպորտային սարքավորումներ	512 1	0,0	X	
5122	- Վարչական սարքավորումներ	512 2	0,0	X	
5123	- Այլ մեքենաներ և սարքավորումներ	512 9	0,0	X	
5130	ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ, որից՝ (տող 5131+տող 5132+տող 5133+ տող5134)	x	2397,0		2397,0
5131	-Աձեցվող ակտիվներ	513 1	0,0	X	
5132	- Ոչ նյութական հիմնական միջոցներ	513 2	0,0	X	
5133	- Գեոդեզիական քարտեզագրական ծախսեր	513 3	2397,0		2397,0
5134	- Նախագծահետազոտական ծախսեր	513 4	0,0		
5200	1.2 ՊԱՇՏՊԱՆՆԵՐ, այդ թվում՝ (տող5211+տող5221+տող5231+տող5241)	x	0,0	X	0,0
5211	- Համայնքային նշանակության ռազմավարական պաշարներ	521 1	0,0	X	
5221	- Նյութեր և պարագաներ	522 1	0,0	X	
5231	- Վերավաճառքի համար նախատեսված ապրանքներ	523 1	0,0	X	
5241	-Սպառման նպատակով պահվող պաշարներ	524 1	0,0	X	
5300	1.3 ԲԱՐՉՐԱՐԺԵՔ ԱԿՏԻՎՆԵՐ, այդ թվում՝ (տող 5311)	x	0,0	X	0,0
5311	-Բարձրարժեք ակտիվներ	531 1	0,0	X	
5400	1.4 ՉԱՐՏԱՂՈՐՎԱԾ ԱՎՏԻՎՆԵՐ, այդ թվում՝ (տող 5411+տող 5421+տող 5431+տող5441)	x	0,0	X	0,0
5411	-Հող	541 1	0,0	X	
5421	-Ընդերքային ակտիվներ	542 1	0,0	X	
5431	-Այլ բնական ծագում ունեցող ակտիվներ	543 1	0,0	X	
5441	-Ոչ նյութական չարտադրված ակտիվներ	544 1	0,0	X	
6000	Գ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ, այդ թվում՝ (տող6100+տող6200+տող6300+տող6400)	x	0,0	X	0,0

6100	ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ, այդ թվում՝ (տոող6110+տոող6120+տոող6130)	x	0,0	X	0,0
6110	ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	8111	0,0		
6120	ՇԱՐՔԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	8121	0,0		
6130	ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	8131	0,0	X	
6200	ՊԱՇԱՐՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ, այդ թվում՝ (տոող6210+տոող6220)	x	0,0	X	0,0
6210	ՈԱԶՄԱԿԱՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	8211	0,0	X	
6220	ԱՅԼ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ, որից՝ (տոող6221+տոող6222+տոող6223)	x	0,0	X	0,0
6221	- Արտադրական պաշարների իրացումից մուտքեր	8221	0,0		
6222	- Վերավաճառքի համար ապրանքների իրացումից մուտքեր	8222	0,0	X	
6223	- Սպառման համար նախատեսված պաշարների իրացումից մուտքեր	8223	0,0	X	
6300	ԲԱՐՋՐԱՐԺԵՔ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ, այդ թվում՝ (տոող 6310)	x	0,0	X	0,0
6310	ԲԱՐՋՐԱՐԺԵՔ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	8311	0,0	X	
6400	ԶԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ, այդ թվում՝ (տոող6410+տոող6420+տոող6430+տոող6440)	x	0,0	X	0,0
6410	ՀՈՂԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	8411	0,0	X	
6420	ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	8412	0,0	X	
6430	ԱՅԼ ԲՆԱԿԱՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	8413	0,0	X	
6440	ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԶԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	8414	0,0	X	

ՀԱՏՎԱԾ 4

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՎԵԼՈՒՐԴ ԿԱՄ ԴԵՖԻՑԻՏԸ (ՊԱԿԱՍՈՒՐԴ)

(հազար
դրամով)

Տողի NN		Ընդամենը (ս.4+ս.5)	այդ թվում՝	
			վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5
8000	ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՎԵԼՈՒՐԴ ԿԱՄ ԴԵՖԻՑԻՏԸ (ՊԱԿԱՍՈՒՐԴ)	-5397,0	0,0	-5397,0

ՀԱՏՎԱԾ 5

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱԿԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՍ ԴԵՖԻՑԻՏԻ (ՊԱԿԱՍՈՒՐԴԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՐՅՈՒՐՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների		Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում`	
	անվանումները	NN		վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
8010	ԸՆԴԱՄԵՆԸ, այդ թվում` (տող 8100+տող 8200), (տող 8000 հակառակ նշանով)		5397,0	0,0	5397,0
8100	Ա. ՆԵՐՔԻՆ ԱՐՅՈՒՐՆԵՐ, այդ թվում` (տող 8110+տող 8160), (տող 8010- տող 8200)		5397,0	0,0	5397,0
8110	1. ՓՈՆԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ, այդ թվում` (տող 8111+տող 8120)		0,0	0,0	0,0
8111	1.1. Արժեթղթեր (բացառությամբ բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության), որից (տող 8112+տող 8113)		0,0	X	0,0
8112	- թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր	9111	0,0	X	
8113	- հիմնական գումարի մարում	6111	0,0	X	
8120	1.2. Վարկեր և փոխառություններ (ստացում և մարում), այդ թվում` (տող 8121+տող 8140)		0,0	0,0	0,0
8121	1.2.1. Վարկեր, որից` (տող 8122+տող 8130)		0,0	X	0,0
8122	- վարկերի ստացում, որից (տող 8123+տող 8124)	9112	0,0	X	0,0
8123	պետական բյուջեից		0,0	X	
8124	այլ աղբյուրներից		0,0	X	
8130	- ստացված վարկերի հիմնական գումարի մարում, որից` (տող 8131+տող 8132)	6112	0,0	X	0,0
8131	<< պետական բյուջեից		0,0	X	
8132	այլ աղբյուրներից		0,0	X	
8140	1.2.2. Փոխառություններ, որից` (տող 8141+տող 8150)		0,0	0,0	0,0
8141	բյուջետային փոխառությունների ստացում, որից` (տող 8142+տող 8143)	9112	0,0	0,0	0,0
8142	<< պետական բյուջեից		0,0		X
8143	<< այլ համայնքների բյուջեներից		0,0		
8150	- ստացված փոխառությունների գումարի մարում, որից` (տող 8151+տող 8152)	6112	0,0	0,0	0,0

8151	« պետական բյուջեին		0,0		X
8152	« այլ համայնքների բյուջեներին		0,0		
8160	2. Ֆինանսական սպասարկում, այդ թվում՝ (տող8161+տող8170+տող8190- տող8197+տող8198+տող8199)		5397,0	0,0	5397,0
8161	2.1. Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն, որից՝ 8162+8163+8164		0,0	X	0,0
8162	- համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության իրացումից մուտքեր	9213	0,0	X	
8163	- իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր	9213	0,0	X	
8164	- բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն ձեռքբերում	6213	0,0	X	
8170	2.2. Փոխատվություններ, որից՝ 8171+8172		0,0	0,0	0,0
8171	- նախկինում տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր	9212	0,0		
8172	- փոխատվությունների տրամադրում	6212	0,0		
8190	2.3. Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդ, այդ թվում՝ (տող 8191+տող 8194-տող8193)		5397,0	0,0	5397,0
8191	2.3.1. Համայնքի բյուջեի վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդ, որից՝	9320	0,0	0,0	X
8192	- ենթակա է ուղղման համայնքի բյուջեի վարչական մասից նախորդ տարում ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված առկա պարտավորությունների կատարմանը		0,0		X
8193	- ենթակա է ուղղման համայնքի բյուջեի ֆոնդային մաս (տող 8191 - տող 8192)		0,0		X
8194	2.3.2. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի միջոցների տարեսկզբի մնացորդ, որից՝ (տող 8195 + տող 8196)	9330	5397,0	X	5397,0
8195	- առանց վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդից ֆոնդային մաս մուտքագրման ենթակա գումարի		5397,0	X	5397,0
8196	- վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդից ֆոնդային մաս մուտքագրման ենթակա գումարը (տող 8193)		0,0	X	0,0
8197	2.4. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս		X	X	X

8198	2.5. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս		X		
8199	2.6. Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում, որից՝ (տող 8010- տող 8110 - տող 8161 - տող 8170- տող 8190- տող 8197- տող 8198 - տող 8210)		0,0	0,0	0,0
8199ա	ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը		0,0	X	
8200	Բ. ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, այդ թվում՝ (տող 8210)		0,0	0,0	0,0
8210	1. ՓՈՒՍԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ, այդ թվում՝ (տող 8211+տող 8220)		0,0	0,0	0,0
8211	1.1. Արժեթղթեր (բացառությամբ բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության), որից՝		0,0	X	0,0
8212	- թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր	9121	0,0	X	
8213	- հիմնական գումարի մարում	6121	0,0	X	
8220	1.2. Վարկեր և փոխատվություններ(ստացում և մարում), այդ թվում տող 8221+տող 8240		0,0		0,0
8221	1.2.1. Վարկեր, որից՝		0,0	X	0,0
8222	- վարկերի ստացում	9122	0,0	X	

ՀԱՏՎԱԾ 6

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

Տողի NN	Բա- ժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Ընդամենը (ս.7 +ս.8)	(հազար դրամներով)	
						այդ թվում՝	
1	2	3	4	5	6	վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
2000	X	X	X	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող2100+տող2200+տող2300+տող2400+տող 2500+տող2600+ տող2700+տող2800+տող2900+տող3000+տող 3100)	14486,0	9089,0	5397,0
2100	01	0	0	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, այդ թվում՝	13317,0	7920,0	5397,0

				(տող2110+տող2120+տող2130+տող2140+տող2150+տող2160+տող2170+տող2180)			
2110	01	1	0	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ, որից՝	13317,0	7920,0	5397,0
2111	01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում	13317,0	7920,0	5397,0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0,0		
			4111	-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	7200,0	7200,0	
			4112	-Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	0,0	0,0	
			4212	-Էներգետիկ ծառայություններ	100,0	100,0	
			4213	-Կոմունալ ծառայություններ	0,0	0,0	
			4214	-Կապի ծառայություններ	150,0	150,0	
			4232	-Համակարգչային ծառայություններ	80,0	80,0	
			4234	-Տեղակատվական ծառայություններ	0,0	0,0	
			4235	-Կառավարչական ծառայություններ	240,0	240,0	
			4239	-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	0,0	0,0	
			4252	-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	40,0	40,0	
			4261	-Գրասենյակային նյութեր և հագուստ	110,0	110,0	
			4267	-Կենցաղային և հանրային սննդի նյութեր	0,0	0,0	
			5113	-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	3000,0		3000,0
			5122	-Վարչական սարքավորումներ	0,0		
			5133	-Գեոդեզիական քարտեզագրական ծախսեր	2397,0		2397,0
2200	02	0	0	ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, այդ թվում՝ (տող2210+2220+տող2230+տող2240+տող2250)	60,0	60,0	0,0
2221	02	2	1	Քաղաքացիական պաշտպանություն	30,0	30,0	0,0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0,0		
			4239	-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	30,0	30,0	
				0,0		
2250	02	5	0	Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող), որից՝	30,0	30,0	0,0
2251	02	5	1	Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	30,0	30,0	0,0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման	0,0		

				հողվածների			
			4239	-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	30,0	30,0	
				0,0		
2300	03	0	0	ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ և ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ, այդ թվում՝ (տող2310+տող2320+տող2330+տող2340+տող2350+տող2360+տող2370)	30,0	30,0	0,0
2320	03	2	0	Փրկարար ծառայություն, որից՝	30,0	30,0	0,0
2321	03	2	1	Փրկարար ծառայություն	30,0	30,0	0,0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հողվածների	0,0		
			4239	-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	30,0	30,0	
				0,0		
2400	04	0	0	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, այդ թվում՝ (տող2410+տող2420+տող2430+տող2440+տող2450+տող2460+տող2470+տող2480+տող2490)	30,0	30,0	0,0
2420	04	2	0	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն, որից՝	30,0	30,0	0,0
2421	04	2	1	Գյուղատնտեսություն	30,0	30,0	0,0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հողվածների	0,0		
			4241	-Մասնագիտական ծառայություններ	30,0	30,0	
2450	04	5	0	Տրանսպորտ, որից՝	0,0	0,0	0,0
2451	04	5	1	Ճանապարհային տրանսպորտ	0,0	0,0	0,0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հողվածների	0,0		
			4264	-Տրանսպորտային նյութեր	0,0		
				0,0		
2500	05	0	0	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, այդ թվում՝ (տող2510+տող2520+տող2530+տող2540+տող2550+տող2560)	15,0	15,0	0,0
2560	05	6	0	Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող), որից՝	15,0	15,0	0,0
2561	05	6	1	Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	15,0	15,0	0,0

				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0,0		
			4823	-Պարտադիր վճարներ	15,0	15,0	
				0,0		
2600	06	0	0	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՍՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, այդ թվում՝ (տող3610+տող3620+տող3630+տող3640+տող3650+տող3660)	240,0	240,0	0,0
2640	06	4	0	Փողոցների լուսավորում, որից՝	240,0	240,0	0,0
2641	06	4	1	Փողոցների լուսավորում	240,0	240,0	0,0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0,0		
			4212	-Էներգետիկ ծառայություններ	240,0	240,0	
				0,0		
2800	08	0	0	ՀԱՆԳԻՍ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ, այդ թվում՝ (տող2810+տող2820+տող2830+տող2840+տող2850+տող2860)	140,0	140,0	0,0
2824	08	2	4	Այլ նշակությամբ կազմակերպություններ	100,0	100,0	0,0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0,0		
			4239	-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	100,0	100,0	
				0,0		
2833	08	3	3	Տեղեկատվության ձեռքբերում	0,0	0,0	0,0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0,0		
			4234	-Տեղակատվական ծառայություններ	0,0		
				0,0		
2840	08	4	0	Կրոնական և հասարակական այլ ծառայություններ, որից՝	40,0	40,0	0,0
2841	08	4	1	Երիտասարդական ծրագրեր	0,0	0,0	0,0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0,0		
				0,0		
2842	08	4	2	Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ	40,0	40,0	0,0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0,0		

			4819	-Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	40,0	40,0	
3000	10	0	0	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, այդ թվում՝ (տող3010+տող3020+տող3030+տող3040+տող3050+տող3060+տող3070+տող3080+տող3090)	200,0	200,0	0,0
3010	10	1	0	Վատառողջություն և անաշխատունակություն, որից՝	200,0	200,0	0,0
3011	10	1	1	Վատառողջություն	200,0	200,0	0,0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0,0		
			4711	- Տնային տնտեսություններին դրամով վճարվող սոցիալական ապահովության վճարներ	200,0	200,0	
				0,0	0,0	
3012	10	1	2	Անաշխատունակություն	0,0	0,0	0,0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0,0	0,0	
				0,0		
				0,0		
3020	10	2	0	Ծերություն, որից՝	0,0	0,0	0,0
3021	10	2	1	Ծերություն	0,0	0,0	0,0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0,0		
				0,0		
				0,0		
				0,0		
3100	11	0	0	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉՂԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ, այդ թվում՝ (տող3110)	454,0	454,0	0,0
3110	11	1	0	ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ, որից՝	454,0	454,0	0,0
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ	454,0	454,0	0,0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0,0		
			4891	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ	454,0	454,0	
				համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներ	0,0		



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀԱՏԻՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
09 դեկտեմբեր 2016 թվականի N 28-Ն
գ. Հատիս

ՀԱՏԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 – 2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջների.

Հատիս համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հատիս համայնքի 2017 - 2021 թվականների զարգացման ծրագիրը համաձայն հավելված 4-ի:

Ավագանու անդամներ

	կողմ	դեմ	ձեռնպահ
Թաղևոսյան Վարդան		_____	_____
Բաղդասարյան Մարտին		_____	_____
Վարդանյան Դերենիկ		_____	_____
Սահարյան Միհր		_____	_____
Կարապետյան Ամբատ		_____	_____
	Կողմ – 5	դեմ – 0	ձեռնպահ – 0

Համայնքի ղեկավար



Ա. Գարսևանյան

09 դեկտեմբեր 2016թ.
գ. Հատիս

ՀԱՍՏԱՏՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ՀԱՏԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԾՐԱԳԻՐ

Մշակվել է՝ համայնքի ղեկավարին կից գործող «Հատիս համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի » կողմից

Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Սամվել Գարսևանյանի կողմից

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 09.12.2016թ. թիվ 28- Ն որոշմամբ

Գ. ՀԱՏԻՍ 2016թ.

Բովանդակություն	
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	2
ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԱԿԱՆԸ.....	5
ԲԱԺԻՆ 1:	6
1.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....	47
<i>1.1.Աշխարհագրական դիրքը, պատմական համառոտ ակնարկ ժողովրդագրություն.....</i>	<i>7</i>
<i>1.2.Ժողովրդագրություն.....</i>	<i>7</i>
<i>1.3.Տեղական ինքնակառավարման մարմինները.....</i>	<i>9</i>
<i>1.4.Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակ.....</i>	<i>52</i>
<i>1.5 Համայնքի սեփականություն համարվող գույքի ֆիզիկական վիճակը.....</i>	<i>52</i>
<i>1.6 Հողօգտագործում.....</i>	<i>13</i>
<i>1.7 Գյուղատնտեսություն.....</i>	<i>13</i>
<i>1.8 Բնության և շրջակա բնական միջավայրի պաշտպանություն.....</i>	<i>14</i>
<i>1.9 Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն</i>	<i>15</i>
<i>1.10 Կրթություն</i>	<i>15</i>
<i>1.11 Առողջապահություն, ֆիզիկական կուլտուրա, սպորտ</i>	<i>16</i>
<i>1.12 Հանգստի գոյրհներ, զբոսայգիներ, խաղահրապարակներ, բակային տարածքներ.....</i>	<i>16</i>
<i>1.13 Աշխատանք և սոցիալական ծառայություն</i>	<i>16</i>
<i>1.14 Բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը.....</i>	<i>56</i>
<i>1.15 Աղետների, ռիսկերի կառավարում.....</i>	<i>17</i>
2. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ.....	18
<i>2.1.1 Համայնքի ուժեղ կողմերը</i>	<i>18</i>
<i>2.1.2 Համայնքի թույլ կողմերը</i>	<i>18</i>
<i>2.1.3 Համայնքի զարգացման հիմնական հնարավորությունները.....</i>	<i>18</i>
<i>2.1.4 Համայնքին սպառնացող հիմնական վտանգներ</i>	<i>19</i>
<i>2.2 Համայնքի զարգացման միտումները.....</i>	<i>19</i>
ԲԱԺԻՆ 2	19
ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ և ՀԶԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ
ԲԱԺԻՆ 3	207
ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ 21	21
3.1ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ.....	22
ԲԱԺԻՆ 5	48
ՀԶԾ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ, ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ (ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ) ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ, ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ.....	55
ԵԶՐԱՓԱԿՈՒՄ	56
ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ.....	58
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	59

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի տեղական ինքնակառավարման համակարգում երկարաժամկետ պլանավորումը լայնորեն չի օգտագործվում, ինչը պայմանավորված է մի շարք պատճառներով: Դրանցից կարևորներն են՝ տեղական ինքնակառավարման ոլորտում տիրող իրավիճակը, համայնքների ֆինանսական ռեսուրսների (բյուջեների) խիստ սահմանափակ լինելը, մեթոդական բացը, մեծ թվով համայնքներում համապատասխան որակյալ կադրերի բացակայությունը և տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ-երի) անտեղյակությունը ռազմավարական պլանավորման օգուտներից: Ի տարբերություն երկարաժամկետ պլանավորման, միջնաժամկետ զարգացման ծրագրեր կազմվում են Հայաստանի բոլոր համայնքներում, քանի որ դա օրենքի պահանջ է: Սակայն, անհրաժեշտ է նշել, որ շատ համայնքներում այդ ծրագրերի կազմմանը լուրջ ուշադրություն չի դարձվում: Դրանք հիմնականում կրում են ձևական բնույթ, որի պատճառների թվում է նաև դրանց մշակման և կառավարման մեթոդական բացը:

ՀՀ Կոտայքի մարզի Հատիս համայնքի 2017-2021թթ զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ՀԶԾ) մշակելիս հաշվի է առնվել 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածը՝ համաձայն որի ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, ինչպես նաև 210-րդ հոդվածը, որտեղ նշվում է, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ կմտնի 2017 թվականի հունվարի 1-ից:

Հատիս համայնքի ՀԶԾ-ի մշակման հիմքում ընկած է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, ՀԶԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները, ինչպես նաև՝ «Համայնքների ֆինանսիստների միավորում» հասարակական կազմակերպության կողմից մշակված և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կողմից 2014 թվականին հավանության արժանացած «Համայնքի զարգացման ծրագրի մշակման և կառավարման մեթոդաբանության» ուղեցույցի¹ մեթոդաբանական առանձնահատկությունները և ծրագրային հիմքերը:

Հատիս համայնքի ՀԶԾ-ն սահմանում է համայնքի զարգացման ծրագրի (ՀԶԾ) մշակման և կառավարման հիմնական սկզբունքները, մեթոդները, կառուցակարգերն ու ընթացակարգերը, և նպատակաուղղված է համայնքում առկա կարիքների գնահատմանը, հիմնախնդիրների բացահայտմանը, միջնաժամկետ ծրագրերի պլանավորման ու իրականացման միջոցով դրանց լուծմանը և համայնքի զարգացման ապահովմանը:

Ներկայացվող ՀԶԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Հատիս համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: ՀԶԾ-ի բովանդակությունը

¹ Ուղեցույցը մշակվել է ԳՄՀԸ-ի ֆինանսավորմամբ ՀՖՄ-ի կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում

պայմանավորված է ՀԶԾ-ի մշակմանը մասնակից կազմակերպությունների (ՀՈԱԿ, ՊՈԱԿ, ՍՊԸ, ԱԶ, ԲԲԸ) աշխատանքային խմբերի (այսուհետ՝ ԿԱԽ-երի) կողմից կատարված աշխատանքով և առաջարկներով, համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: ՀԶԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել համայնքում հանրային ծառայությունների մատչելիության և հասանելիության, նոր ծառայությունների մատուցման և դրանցով պայմանավորված լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները: ՀԶԾ-ն մշակելիս որպես կողմնորոշող ուղղվածությունն դիտարկվել է համայնքը զարգացնելու, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսման առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ գյուղատնտեսության, փոքր և միջին բիզնեսի, տուրիզմի և այլնի) հնարավորությունները և դրանց արդյունավետ կառավարման իրականացումը: ՀԶԾ-ն մշակվել է մասնակցային եղանակով՝ հաշվի առնելով համայնքի շահագրգիռ բոլոր կողմերի առաջարկությունները: Հարցումների միջոցով վեր են հանվել համայնքի բնակիչներին, համայնքի տարածքում գործող պետական և մասնավոր կազմակերպություններին հուզող խնդիրները, դրանք գնահատվել են ԿԱԽ-երի կողմից և դասակարգվել ըստ առաջնահերթության: Վերհանված հիմնախնդիրների հիման վրա, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից, համայնքի ղեկավարը՝ համայնքի աշխատակազմի և համայնքի ղեկավարին կից գործող խորհրդակցական մարմնի (ԽՄ) հետ միասին մշակել է համայնքի 2017-2021թթ. ՀԶԾ-ն, որը պետք է քննարկվի և հաստատվի է համայնքի ավագանու կողմից և դրվի գործողության մեջ:

Համայնքի 2017-2021թթ. ՀԶԾ-ն ներկայացնում է Հատիս համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական և տնտեսական ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծում և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացում:

ՀԶԾ-ն ներառում է նաև Հատիս համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի դրույթները: Այն Հատիս համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացման, Հատիսի բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա հինգ տարիներին ընդունված ծրագիր է:

Համայնքի ղեկավարին կից ՀԶԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմինը փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի ներկայումս գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր

հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀԶԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

Համայնքի զարգացման ծրագրում պարտադիր կարգով ներառվում են.

- 1) համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ.
- 2) շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ.
- 3) համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ.
- 4) աղետների ռիսկերի կառավարման հիմնական մոտեցումներ.
- 5) համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված միջոցառումներ:

Այն բաղկացած է հետևյալ բաժիններից՝

ՀԶԾ-ի 1-ին բաժնում ներկայացվում է համայնքի ընդհանուր նկարագրությունը, սոցիալ-տնտեսական ընդհանուր և ոլորտային փաստացի իրավիճակը, համայնքում իրականացվող ծրագրերը: Բաժնում ներառվել է նաև համայնքի ֆինանսական վիճակը և դրանց կանխատեսումները, համայնքի զարգացմանը խոչընդոտող հիմնական խնդիրները և դժվարությունները, համայնքի ՈԻԹՀՎ-վերլուծությունը՝ հիմնվելով համայնքի իրավիճակի վերլուծության ու գնահատման արդյունքների վրա, ձևակերպելով համայնքի ուժեղ և թույլ կողմերը, զարգացման ներքին ու արտաքին հիմնական հնարավորությունները, համայնքին սպառնացող հիմնական վտանգները:

ՀԶԾ-ի 2-րդ բաժնում ներկայացված է համայնքի նպատակները և գործողությունների պլանավորումը: Մասնավորապես սահմանվում են համայնքի զարգացման տեսլականը, թե ինչպիսին ենք ցանկանում տեսնել մեր համայնքը ապագայում, ռազմավարությունը և ՀԶԾ-ի հիմնական նպատակները:

ՀԶԾ-ի 3-րդ բաժնում ներկայացվում են պետության և միջազգային դոնոր կազմակերպությունների հետ համայնքում գալիք հինգ տարիների ընթացքում նախատեսվող (շարունակվող) համագործակցության ուղղությունները: **Մասնավորապես՝** ներկայացվում են համայնքի ֆինանսական վիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը՝ ըստ համայնքի բյուջեի եկամտային ուղղությունների (սեփական եկամուտներ, պաշտոնական տրանսֆերտներ, փոխառու միջոցներ)՝ դիտարկելով նախորդ երկու և գալիք հինգ տարիների եկամտային ցուցանիշները: Ներկայացված են համայնքի զարգացման ծրագրերը: Դրանք գնահատվել են ըստ սահմանված չափորոշիչների և սահմանվել են առաջնահերթություններ: Ամփոփ ձևով ներկայացվել են առաջնահերթ այն ծրագրերը, որոնք մոտավոր հաշվարկներով ակնկալվում է, որ հնարավոր կլինի իրականացնել կանխատեսվող ֆինանսական միջոցներով: Գալիք հինգ տարիների ընթացքում իրականացման ենթակա ծրագրերը ձևակերպվել են՝ օգտագործելով ծրագրերի կազմման օրինակելի ձևը, ինչպես նաև ներկայացնելով ծրագրերի

գրերի ֆինանսավորման աղբյուրները (համայնքի բյուջե, ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ, այլ) և դրանց մոտավոր արժեքներն՝ ըստ գալիք հինգ տարիների:

ՀՁԾ-ի 4-րդ բաժնում ներկայացվում է համայնքի սեփականություն համարվող շենքերի ու շինությունների, հողամասերի կառավարման (օտարման, վարձակալության տրամադրման) ծրագիրը:

ՀՁԾ-ի 5-րդ բաժնում ներկայացվում է ՀՁԾ-ի իրականացումը, մշտադիտարկումը (մոնիթորինգը) և գնահատումը, վերահսկումը և վերանայումը:

ՀՁԾ-ի եզրափակում բաժնում ներկայացվում են համառոտ մոտեցումներ՝ ՀՁԾ-ի իրականացման, վերահսկման և գնահատման, ծրագրերի իրականացման արդյունքների քննարկման, ՀՁԾ-ում փոփոխությունների և (կամ) լրացումների կատարման գործընթացների վերաբերյալ:

ՀՁԾ-ի հավելվածներ բաժնում ներկայացվում է մանրամասն և լայնածավալ տեղեկատվություն տարբեր հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են համայնքի հիմնական ցուցանիշների՝ գալիք հինգ տարիների կտրվածքով գնահատում և կանխատեսում, համայնքի ոլորտային ծրագրերի՝ ըստ ծրագրերի օրինակելի ձևի ձևակերպումներ և այլն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԱԿԱՆԸ

Հատիս համայնքը բարեկարգ ու մաքուր, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող, էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ, ինչպես նաև բնակչության զբաղվածությունն ապահովող համայնք է, որտեղ մատուցվում են բնակչության համար անհրաժեշտ հանրային ծառայություններ՝ մշակութային, սպորտային ծառայություններ և այլն:

Ներկայումս համայնքի հիմնախնդիրներն են հանդիսանում՝

- ❖ Համայնքում աշխատում է 40 համարի երթուղայինը, սակայն բնակչության սպասարկման համար այն բավարար չէ: Ուսանողների սպասարկման համար անհրաժեշտ է գոնե ևս մեկ երթուղային, որը կուղևորվի դեպի մայրաքաղաքի կենտրոնական մաս:
- ❖ Ներկայումս ներհամայնքային ճանապարհները վերանորոգման կարիք ունեն: Սակայն համայնքի փողոցները համարակալված են անհրաժեշտ ցուցանակներով:
- ❖ : Շատ վատ վիճակում է գտնվում խմելու ջրի ջրամատակարարումը, որը երբևիցե հիմնովին չի վերանորոգվել, և մոտակա տարիներին չվերանորոգելու արդյունքում համայնքը կկանգնի բարդ խնդրի առջև:
- ❖ Համայնքի կարևոր հիմնախնդիրներից է հանդիսանում նաև այն, որ որոշ փողոցներ փողոցային լուսավորության և ասֆալտապատման կարիք ունեն:
- ❖ Համայնքի զարգացման համար անհրաժեշտ են մեծ կապիտալ ներդրումներ կատարել կաթի և կաթնամթերքի արտադրության ոլորտում, որը կգործի տեղական հումքի բազայի վրա: Կբացվեն աշխատատեղեր, որը կնպաստի բնակչության արտահոսքի դադարեցմանը ու կբարձրացնի բնակչության կենսամակարդակը:

Վերը նշված խնդիրները որպես ծրագրեր մշակելու և գնահատելու համար իրականացվել են դրանց քննարկում համայնքի տարածքում գործող պետական, համայնքային և մասնավոր կազմակերպությունների աշխատանքային խմբերի հետ և դասակարգվել ըստ առաջնահերթության: Վերհանված հիմնախնդիրների հիման վրա, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից, կազմակերպվել են հանրային քննարկումներ, ինչպես նաև համայնքի ղեկավարը՝ համայնքի աշխատակազմի և համայնքի ղեկավարին կից գործող խորհրդակցական մարմնի (ԽՄ) հետ միասին մշակել է համայնքի 2017-2021թթ. ՀԶԾ-ն, որը պետք է քննարկվի և հաստատվի է համայնքի ավագանու կողմից՝ նորընտիր հա-

մայնքի ղեկավարի պաշտոնավարելու օրվանից եռամսյա ժամկետում և դրվի գործողության մեջ:

ԲԱԺԻՆ 1

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1.1. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հատիս գյուղը հիմնադրվել է 1920 թ. Արևմտյան Հայաստանից և Սևանի ավազանից գաղթած հայերի կողմից: Հատիս գյուղում(Քյանքյան) պաշտպանվում են ուշ միջնադարի խաչքարեր:

1933 թ. Հատիս գյուղում հիմնադրվել է կոլտնտեսություն, որը մասնագիտացված է եղել դաշտավարության և անասնապահության ուղղությամբ:

Հատիս գյուղը գտնվում է Հայաստանի բարձր լեռնային գոտում, Հատիս լեռան ստորոտում, ծովի մակերևույթից բարձր է 2030մ:

Գյուղի վարչական տարածքը կազմում է 6047,07 հա: Հատիս գյուղը Աբովյան քաղաքից գտնվում է 18 կմ հեռավորության վրա, Երևանից՝ 34 կմ, մարզկենտրոնից՝ Հրազդանից՝ 42 կմ:

1992 թ. Հողի սեփականաշնորհումից հետո գյուղացիները զբաղվում են դաշտավարությամբ և անասնապահությամբ:

Ղարաբաղյան շարժման ժամանակ գյուղում ապաստան են գտել 3 հայ փախստական ընտանիք, որոնք ստացել են սեփականաշնորհված հող և բնակարաններ:

1.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2016 թ.-ի հունվարի 1-ի դրությամբ Հատիս համայնքի բնակչության թիվը կազմել է 403 մարդ, որից կին՝ 203, տղամարդ՝ 200: (աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Համայնքի մշտական բնակչության ու տնային տնտեսությունների ցուցանիշները (01.10.2016 թ. դրությամբ)

Ը/Ը	Ցուցանիշները	Մարդ
1.	Բնակչության թվաքանակը, մարդ	403

2.	Տնային տնտեսությունների թվաքանակը	86
2.1	այդ թվում՝ ժամանակավոր կացարաններում /վազոն, տնակ/ բնակվող	-
2.2	կիսակառույց տներում բնակվող	-
3.	Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների քանակը	2

Համայնքի բնակչության 49.6% կազմում են տղամարդիկ և 50.4% կանայք: Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը ներկայացված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները (01.01.2016 թ. դրությամբ)

Հ/Հ	Ցուցանիշները	Ընդամենը	Կանայք	Տղամարդիկ
1.	Համայնքի բնակչության թիվը, այդ թվում՝	403	203	200
1.1	մինչև 1 տարեկան	6	4	2
1.2	1-2 տարեկան	5	4	1
1.3	3-4 տարեկան	4	1	3
1.4	5-6 տարեկան	18	9	9
1.5	7-10 տարեկան	17	7	10
1.6	11-14 տարեկան	13	4	9
1.7	15-17 տարեկան	11	7	4
1.8	18 և ավելի տարեկան	329	167	162
2.	Կենսաթոշակատուներ (ներառյալ հաշմանդամներ) այդ թվում՝	26	14	12

2.1	Տարիքային և աշխատանքային	26	14	12
3.	Միակողմանի ծնողագուրկ երեխաներ	-	-	-
4.	Երկկողմանի ծնողագուրկ երեխաներ	-	-	-
5.	Հաշմանդամ երեխաներ	2	2	-
6.	Խնամակալության հանձնված երեխաներ	-	-	-
7.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	-	-	-
8.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	-	-	-
9.	Հաշմանդամներ	6	4	2
10.	Զբաղվածներ	303	153	150
11.	Գործազուրկներ	-	-	-
12.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	2	1	1
13.	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը	1	-	1

1.3 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Հատիս համայնքում տեղական ինքնակառավարումն իրականացնում են ընտրությունների արդյունքում ձևավորված տեղական իշխանությունները՝ համայնքի ղեկավարն ու համայնքի ներկայացուցչական մարմինը՝ ավագանին իր 5 անդամներով: Հատիս համայնքի աշխատակազմը բաղկացած է 7 աշխատակցից:

Համայնքապետարանն ունի վարչական շենք, որը կառուցվել է 1973 թվականին և ունի հիմնանորոգման կարիք: Այն գտնվում է Հատիս համայնքի 5 փողոց թիվ 2 հասցեում: Աշխատակազմի աշխատանքի կատարման համար ստեղծված են անհրաժեշտ պայմաններ, կահույքը նորացված է հիմնականում 2007 թվականին համայնքապետարանը հագեցած է տեխնիկայով, որը լիովին բավարար է աշխատակազմի լիարժեք գործունեությունն ապահովելու համար: Համայնքապետարանի դահլիճի հատակը վերանորոգման և տեխնիկայով ու գույքով կահավորման կարիք ունի, հանրային մեծ քննարկումներ և այլ միջոցառումներ կազմակերպելու համար:


Համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատվել են համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 09-ի թիվ 26-Ն որոշմամբ (աղյուսակ3):

Աղյուսակ 3.

Հատիս համայնքի աշխատակազմը

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը, /ՀՀ/ դրամ	Հավելավճար	Ընդամենը
Քաղաքական պաշտոն				
Համայնքի ղեկավար	1	132300		132300
Համայնքային ծառայողներ				
Աշխատակազմի քարտուղար	1	79400		79400
Առաջատար մասնագետ	1	72800	5200	78000
1-ին կարգի մասնագետ	1	72800		72800
1-ին կարգի մասնագետ	1	72800	5200	78000
Տեխնիկական սպասարկման անձնակազմ				
Հավաքարար	1	72800		72800
Պահակ	1	72800		72800
Ընդամենը	7	575700	10400	586100

ՀԱՏԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



Գծապատկեր 1. Հատիս համայնքի աշխատակազմի կառավարման կազմակերպական կառուցվածք

1.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ

Հատիս համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 18-ի N 18-Ն որոշմամբ հաստատված 2016 թվականի բյուջեն եկամտային մասով կազմել է 9149.0 հազար դրամ, ծախսերի գծով՝ 9149.0 հազար դրամ: Հատիս համայնքի ավագանու 2016 թվականի հունվարի 26-ի թիվ 4-Ն որոշմամբ 2016 թվականի բյուջեն (ճշտված բյուջե) եկամտային մասով փոփոխվել է 9869.8 հազար դրամ, ծախսերի գծով՝ 9869.8 հազար դրամ: 2016 թվականի բյուջեի եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 44.4 %՝ 4385.0 հազար դրամ:

Համայնքի զարգացման համար անհրաժեշտ են մեծ կապիտալ ներդրումներ կատարել կաթի և կաթնամթերքի արտադրության ոլորտում, որը կգործի տեղական հումքի բազայի վրա: Կբացվեն աշխատատեղեր, որը կնպաստի բնակչության արտահոսքի դադարեցմանը ու կբարձրացնի բնակչության կենսամակարդակը:

Համայնքում գործում են միջնակարգ կրթության մեկ հաստատություն՝ միջնակարգ դպրոց:

Հատիս համայնքում գործում է բուժկետ: Բուժկետը գտնվում է համայնքապետարանի շենքում և ունի բոլոր պայմանները բնակչությանը առաջին բուժօգնություն ցուցաբերելու համար:

1.5 ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը սահմանված է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, որը ներկայացված է հավելված 2-ում: Տնտեսական անկման հետևանքով համայնքի գույքի ֆիզիկական վիճակը վատթարացել էր, սակայն գույքի 80%-ը համայնքի միջոցներով աստիճանաբար վերականգնվում են: Սակայն կան դեռևս չլուծված խնդիրներ՝ օրինակ խմելու ջրի ներտնտեսային համակարգը կառուցվել է 1965-1970 թվականներին և ներկայումս մաշվածությունն այնքան մեծ է, որ կորուստները հասնում են 30-40%-ի:

Աղյուսակ 4.

Համայնքի սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների վիճակի գնահատում

Ը/Ը	ԿԱՌՈՒՅՑԸ	ՀԱՍՑԵ	ԿԱՌՈՒՑ ՄԱՆ ՏԱՐԵԹԻ ՎԸ	ՄԱԿԵ ՐԵՍԸ՝ քմ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	ՆՈՐՈԳՄԱՆ/ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ / ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԿԱՐԻՔ	ԱՅԼ ՆՇՈՒ ՄՆԵՐ
1.	Հատիս համայնքապետարանի վարչական շենք	գ. Հատիս, 5-րդ փողոց թիվ 2	1973 թվական	408,0	վատ	հիմնանորոգման	
6.	Միջնակ. դպրոց	գ. Հատիս 1-ին փողոց թիվ 1	1976 թվական	2424,4	վատ	հիմնանորոգման	

16.	Ներհամայնքային փողոցներ	գ. Հատիս	1987	3կմ	բավարար	վերանորոգման կարիք ունի	
17.	Ներհամայնքային նշանակության ճանապարհներ	գ. Հատիս	2013	8կմ	լավ		
20.	գերեզմանատուն	գ. Հատիս			լավ		

1.6 ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի հողային տարածքը կազմում է 6047,07 հա, որից

- ❖ Վարելահող-909,37 հա
- ❖ Խոտհարք-978,27 հա
- ❖ Արոտավայրեր-2917,22 հա
- ❖ Այլ հողատեսքեր – 1096,29 հա
- ❖ Բնակավայրերի հողեր - 46.44 հա
- ❖ Հասարակական – 2,46 հա
- ❖ Ընդհանուր օգտագործման – 6,15 հա
- ❖ Այլ հողեր – 8,53 հա
- ❖ Արդյունաբերական հողեր -23.42 հա
- ❖ Էներգետիկայի, կապի տրանսպ. կոմունալ ենթ. հողեր- 1.16 հա
- ❖ Պատմական և մշակութային – 54,53 հա
- ❖ Զրային – 3,23 հա

Հողերի սեփականաշնորհմանը մասնակցել է 86 ընտանիք, մեկ հողաբաժնի չափը կազմել է 5,12 հա, բնակավայրի տարածքը կազմում է 46,44 հա:

1.7 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հատիս համայնքում գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղված են դաշտավարությամբ և անասնապահությամբ, ընդհանրապես գյուղատնտեսության բնագավառում զբաղված է համայնքի բնակչության 95 %-ը: Համայնքի գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղված են ցորենի, գարու, վարսակի, հաճարի և բազմամյա խոտաբույսերի մշակմամբ, որը խիստ զգայուն է շրջակա միջավայրի նկատմամբ

և մեծապես կախված է բնության քմահաճույքից: Ընդահուր առմամբ համայնքում արտադրվում է միս, կաթ, բուրդ, ձու, մեղր, ցորեն, գարի, հաճար, վարսակ և բանջարաբոստանային մշակաբույսեր: Հողերը համարվում են անջրդի հողատարածություններ: Դաշտամիջյան ճանապարհները, որոնք համայնքում կազմում են 20-30 կմ գտնվում են ոչ բարվոք վիճակում: Գյուատնտեսական աշխատանքները կազմակերպելու համար համայնքում առկա է 15 տրակտոր, 10 բեռնատար-ավտոմեքենաներ, 15 կցասայլեր, 10 տրակտորային խոտհնձիչներ, 15 մամլիչ-բարդոձիչներ, 15 գութան, 5 շարքացան:

ԱՂՅՈՒՍԱԿ 5.

ՀԱՏԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ԱՆԱՍՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԸ

Հ/Հ	Ցուցանիշները	01.01.2016 թ. դրությամբ
1.	Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը, որից՝	1071
1.1	Կովեր	715
2.	Խոզերի գլխաքանակը	184
3.	Ոչխարների և այծերի գլխաքանակը	679
4.	Ավանակների և ջորիների գլխաքանակը	0
5.	Ձիերի գլխաքանակը	30
6.	Հավերի և այլ թռչունների գլխաքանակը	1365
7.	Մեղվարնտանիքների քանակը	97

1.8 ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Շատ վատ վիճակում է գտնվում խմելու ջրի ջրամատակարարման համակարգը, որը երբևիցե հիմնովին չի վերանորոգվել, և մոտակա տարիներին չվերանորոգելու արդյունքում համայնքը կկանգնի բարդ խնդրի արջև: Համայնքում չկան անտառապատ տարածքներ, ջրավազաններ և հատուկ պահպանվող տարածքներ: Համայնքն ունի երեխաների համար նախատեսված խաղահրապարակ:

Սակայն այս ամենով հանդերձ համայնքում բնության և շրջակա բնական միջավայրի պահպանության բնագավառում դեռևս պետք է կատարել հետևյալ միջոցառումները՝

- կառուցել սպանդանոց՝ կենդանիների մորթը թույլատրված նորմերում կատարելու համար,

- համայնքի փողոցներում իրականացնել ծառատունկ,
- ավելացնել համայնքի կանաչապատ և ծաղկապատ տարածքները,
- ներգրավել համայնքի բնակչությանը բնապահպանական խնդիրների լուծման գործընթացում՝ հասարակական կազմակերպությունների հետ համատեղ պարբերաբար անցկացվող սեմինարների, դասընթացների, տեսագովազդների, ցուցանակների և հանրային իրազեկման այլ միջոցներով:

1.9 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հատիս համայնքն ունի 10 կմ երկարությամբ ներբնակավայրի ճանապարհներ, և փողոցներ, 20 կմ երկարությամբ դաշտեր տանող ճանապարհներ: Ներհամայնքային ճանապարհները ասֆալտապատ լինելով մշտապես պահանջում են վերանորոգում: Համայնքում աշխատում է 40 համարի երթուղայինը, սակայն բնակչության սպասարկման համար այն բավարար չէ: Ուսանողների սպասարկման համար անհրաժեշտ է գոնե ևս մեկ երթուղային, որը կուղևորվի դեպի մայրաքաղաքի կենտրոնական մաս:

Համայնքի բնակավայրերում տեղադրված կանգառներ չկան, անհրաժեշտ է տեղադրել բազմաֆունկցիոնալ կանգառներ: Համայնքում տեղադրված են ճանապարհային նշաններ, որը նույնպես շատ կարևոր է: Համայնքի փողոցները ամբողջովին համարակալված անհրաժեշտ ցուցանակներով:

1.10 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Հատիս համայնքում գործում է հանրակրթական միջնակարգ 1 դպրոց:

Դպրոցն ունի 2 մասնաշենք, որոնք հիմնանաորգման կարիք ունի: Դպրոցը ապահովված է ջեռուցմամբ:

Աղյուսակ 6-ում ներկայացված է վերը նշված ուսումնական հաստատության աշխատողների և ուսուցանվող երեխաների վերաբերյալ տեղեկատվություն:

Աղյուսակ 6. Հատիսի Վ. Վարդանյանի անվան միջն. դպրոց ՊՈԱԿ-ի վերաբերյալ ցուցանիշներ

Ը/հ	Հաստատության անվանումը	Աշխատողների թիվը	Սովորողների թիվը
1.	«Հատիսի Վ. Վարդանյանի անվան միջն. դպրոց» ՊՈԱԿ	22	37

1.11 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐԱ, ՍՊՈՐՏ

Հատիս համայնքում գործում է բուժկետ, որտեղ աշխատում է 1 բուժքույր: Բուժկետը գտնվում է համայնքապետարանի շենքում և ունի բոլոր պայմանները բնակչությանը առաջին բուժօգնություն ցուցաբերելու համար: Այն վերանորոգվել է 2007 թվականին Սոցիալական ներդրումների հիմնադրամի միջոցներով, իսկ աշխատանքները իրականացվել է համայնքի բնակիչների կողմից:

Համայնքի տարածքում սպորտդահլիճը առկա է միայն դպրոցում սակայն սպորտդահլիճում պակասում է համապատասխան գույքը:

1.12 ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ, ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Համայնքն ունի 600 քմ տարածքով զբոսայգի, որտեղ կառուցված է Հայրենական մեծ պատերազմի զոհվածների հուշարձան-կոթողը: Տարածքը ամբողջովին ցանկապատված է:

Համայնքի կենտրոնում է գտնվում մոտ 200 քմ ընդհանուր մակերեսով խաղահրապարակ:

1.13 ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Քանի որ համայնքի տարածքում չկան գործող մեծ գործարաններ կամ արտադրամասեր, ուստի բնակչությունը աշխատանք է փնտրում հիմնականում Աբովյան քաղաքում:

Համայնքում չկան աշխատանքի և սոցիալական ծառայության գործակալություններ: Այս ծառայությունը գտնվում է Աբովյան քաղաքում, որը համայնքից հեռու է մոտ 18 կմ, որը բնակիչների համար դժվարություններ է ստեղծվում այնտեղ հասնելու համար: Համայնքապետարանն իր հնարավորությունների սահմաններում օգնություն է ցուցաբերում սոցիալապես անապահով ընտանիքներին, համայնքի ծնողազուրկ, հաշմանդամ և սոցիալապես շատ ծանր վիճակում գտնվող երեխաներին՝ պարբերաբեր տրամադրելով դրամ, պայուսակներ, գրենական պիտույքներ և այլ անհրաժեշտ պարագաներ:

1.14 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Համայնքապետարանը ստեղծել է իր պաշտոնական վեբ կայքը՝ www.hatis.am, որի նպատակը բնակչությանը համայնքի կառավարման վերաբերյալ իրազեկումն է, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով ամրագրված հրապարակայնության և թափանցիկության ապահովումը, տեղական իշխանություն-բնակչություն կապի ամրապնդումը և բնակչության շրջանում տեղական իշխանության նկատմամբ վստահության բարձրացումը: Սակայն, կայքում տեղական ինքնակառավարման վերաբերյալ տեղեկատվության առկայությունը դեռևս հեռու է բավարար լինելուց և անհրաժեշտ է բարելավել կայքի աշխատանքը,

բարձրացնել օպերատիվությունը: Համայնքապետարանում և բնակավայրերի կենտրոնական հատվածներում տեղադրված են տեղեկատվական ցուցատախտակներ, որոնց միջոցով ապահովվում է համայնքի ղեկավարի եւ ավագանու կայացրած որոշումների հրապարակայնությունը:

Համայնքի ավագանին.

- ✓ 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N 18-Ա որոշմամբ հաստատել է «Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը» Ավագանին 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N 18-Ա որոշմամբ հաստատել է
- 1. Հատիս համայնքի ղեկավարին կից համայնքի զարգացման ծրագրի և բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի կազմը՝
 - ❖ խորհրդակցական մարմնի նախագահ՝ Սամվել Գարսևանյան - համայնքի ղեկավար
 - ❖ խորհրդակցական մարմնի քարտուղար՝ Օհան Սահակյան - համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար
 - ❖ խորհրդակցական մարմնի անդամներ՝
 - Վահագ Մելիքյան – 1-ին կարգի մասնագետ
 - Վարդան Թադևոսյան- համայնքի ավագանու անդամ
 - Դերենիկ Վարդանյան - համայնքի ավագանու անդամ
 - Վարդան Եփրեմյան - համայնքի բնակիչ
 - Թագուհի Գևորգյան - համայնքի բնակիչ

1.15 ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում քաղաքացիական պաշտպանության կազմակերպումը, կառավարումը հանդիսանում է համայնքային իշխանության կողմից պարտադիր կատարվող գործառույթ: Համայնքային իշխանության ենթակառուցվածքների ներգրավմանը զուգահեռ, Քաղպաշտպանության շտաբի մեջ ներառված ծառայությունները ներկայացնում են համայնքային այլ պատկանելիության, մասնավոր հատվածի մի շարք կազմակերպություններ (կապի, տրանսպորտի, բժշկական, սանիտարա-հիգիենիկ ծառայությունների և այլ ոլորտներից), առանց որոնց անհնար է քաղպաշտպանության շտաբի ֆունկցիոնալ գործունեության արդյունավետ ապահովումը:

Հատիս համայնքի քաղպաշտպանության շտաբի պետն ի պաշտոնե համարվում է համայնքապետը, որի անմիջական հանձնարարությամբ գործում են քաղպաշտպանության շտաբի առանձին ծառայությունները՝ ծառայությունների պետերի համակարգմամբ:

Արտակարգ իրավիճակներում փրկարարական աշխատանքների իրականացման գործում բնակչության էվակուացման համար մշակված է պլան, համապատասխան որի,բնակելի, հասարակական շենքերի, մյուս շենքերի ու շինությունների համարնախատեսված է հարմարավետ մոտեցումներով աշխատանքների կատարման կոմունիկացիոն սխեմաներ: Բնա-

կավայրերում եղած թաքստոցները հաշվառված են համայնքապետարանի կողմից: Անհրաժեշտություն կա թաքստոցները ավելացնել բնակչության թվին համապատասխան:

Համայնքում աղետների ոհակերի կառավարման համար, Հատիս համայնքի ղեկավարի 2011 թվականի դեկտեմբերի 7-ի N 2 որոշմամբ ստեղծվել է ՀՀ Կոտայքի մարզի Հատիս համայնքի բնակչության տարահանման հանձնաժողով, ինչպես նաև հաստատվել է հանձնաժողովի կանոնադրությունը և գործունեության կարգը:

2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

2.1.1 Համայնքի իրավիճակի վերլուծության արդյունքում վեր են հանվել մի շարք հիմնահարցեր, որոնք ամփոփ կերպով ներկայացված են ստորև.

- ✓ Խմելու ջրի օրվա կարգավորիչ ջրամբարի կառուցում
- ✓ Համայնքի վարչական շենքի հիմնանորոգում,
- ✓ Համայնքի 2-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ փողոցների լուսավորում,
- ✓ Համայնքի փողոցների ասֆալտապատումը,
- ✓ Էներգախնայողության եւ վերականգնվող էներգետիկայի ծրագրերի իրագործումը,
- ✓ Համայնքի ֆուտբոլի հրապարակի կառուցումը,

2.1.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի ուժեղ կողմերն են՝

- ✓ Զարգացման համար համայնքն ունի բավարար մասնագիտական ներուժ,
- ✓ Հաշվի առնելով համայնքի աշխարհագրական դիրքը՝ այն կարելի է դարձնել հանգստի և առողջարանային գոտի,
- ✓ Արովյան-Հատիս ճանապարհի լավ վիճակը,

2.1.3 ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի թույլ կողմերն են՝

- ✓ Խմելու ջրի ներհամայնքային համակարգերի վատ վիճակը,
- ✓ Աշխատատեղերի պակասը:

2.1.4 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Համայնքի զարգացման հնարավորություններն են՝
- ✓ Աշխատուժի առկայությունը,
- ✓ Արտադրական տարածքների առկայությունը:

2.1.5 ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՅՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

Խմելու ջրի ներհամայնքային համակարգը կառուցվել է 40 տարի առաջ և ոչ մի անգամ չի ենթարկվել կապիտալ նորոգման և եթե առաջիկա 1-2 տարում հիմնական նորոգման չենթարկվի, ապա մաշվածության պատճառով հնարավոր է կեղտաջրերի ներթափանցումը համակարգ, որը կդառնա ինֆեկցիոն հիվանդությունների առաջացման պատճառ:

2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Հատիս համայնքի տարածքային և տնտեսական զարգացման գործում կարևոր է հաշվի առնել համայնքի բնակչության հեռանկարային աճը, որը ելնում է համայնքի հեռանկարային տարածքային զարգացման հաշվարկված հնարավորություններից: Ըստ այդ հաշվարկների, համայնքի տարածքում կարող է բնակվել առավելագույնը 1,0 հազ. մարդ՝ չխախտելով տարածքի էկոլոգիական հավասարակշռությունը, ընդ որում աճի տեմպերի համար ժամկետներ չեն կանխատեսվում, քանի որ այն կախված է հանրապետության ընդհանուր տնտեսական զարգացման տեմպից, քաղաքական իրավիճակից, բնակչությանը աշխատատեղերով ապահովելու մակարդակից:

ԲԱԺԻՆ 2

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Համայնքի տեսլականն է՝

Հատիս համայնքը բարեկարգ ու մաքուր, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող, էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական մթերքների արտադրու-

թյամբ, ինչպես նաև բնակչության զբաղվածությունն ապահովող համայնք է, որպեսզի մատուցվում են բնակչության համար անհրաժեշտ ծառայությունները:

Նշված տեսլականին հասնելու համար համայնքը որդեգրել է հետևյալ **ռազմավարությունը՝**

- ✓ Խմելու ջրի օրվա կարգավորիչ ջրամբարի կառուցում
- ✓ Համայնքի վարչական շենքի հիմնանորոգում,
- ✓ Համայնքի 2-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ փողոցների լուսավորում,
- ✓ Համայնքի փողոցների ասֆալտապատումը,
- ✓ Էներգախնայողության եւ վերականգնվող էներգետիկայի ծրագրերի իրագործումը,
- ✓ Համայնքի ֆուտբոլի հրապարակի կառուցումը,

ԲԱԺԻՆ 3

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Հատիս համայնքում գալիք 2017-2021թթ. Ընթացքում նախատեսվում է սերտորեն համագործակցել պետության, միջազգային կազմակերպությունների, մասնավոր սեկտորի և այլ շահագրգիռ կողմերի հետ:

Պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով համայնքը նախատեսում է համագործակցել ՀՀ Կոտայքի մարզպետարանի ստորաբաժանումների հետ՝ հետևյալ ծրագրերի իրականացման նպատակով.

- ❖ Երևան քաղաքի հետ, որը լինելով մայրաքաղաք, մշտական հասարակական տրանսպորտային հաղորդակցության կազմակերպում և ապահովում՝ համագործակցության ներգրավելով մասնավոր տրանսպորտային կազմակերպությունների:
- ❖ Համայնքում գյուղատնտեսության զարգացում, ինչը ենթադրում է, օրինակ պարարտանյութերի, սերմացուների տրամադրում, գյուղմթերքների իրացման, գյուղտեխնիկայի ձեռքբերման հնարավորությունների ստեղծում, խորհրդատվության տրամադրում և այլ միջոցառումների կազմակերպում
- ❖ Պետական պատվերի շրջանակներում կրթության, առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում բնակչությանը հանրային ծառայությունների մատուցում:

❖ Աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում, համայնքի գործողությունների պլանի կազմում և իրականացում, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում, պատասպարանների և թաքստոցների կառուցում:

Պլանավորվող հինգ տարիների ընթացքում նախատեսվում է շարունակել համագործակցությունը համայնքի և ՀՀ Կոտայքի մարզում գործունեություն ծավալող՝ միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի սուբյեկտների, այլ կազմակերպությունների և անհատների հետ:

Հատիս համայնքում առկա համագործակցության շրջանակներում իրականացվող ծրագրերն են.

- Մասնակցել համայնքների միավորման ծրագրին
- Դպրոցներին համապատասխան մասնագիտական սենյակներով, գույքով և սարքավորումներով ապահովում
- Համայնքի գլխավոր, գոտիավորման հատակագծի կազմում
- Խմելու ջրի օրվա կարագավորիչ ջրամբարի կառուցում
- Ֆուտբոլի մարզադաշտի կառուցապատում
- Փողոցային լուսավորության ավարտ
